

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զարգացման ծրագրերի և վերլուծության
բաժնի գլխավոր մասնագետ
/ծածկագիր՝ 64-3.1-10/

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագրերի մշակմանը, նախապատրաստմանը, աջակցում և մասնագիտական օգնություն է ցուցաբերում Սևանի, Մարտունու, Ճամբարակի տարածաշրջանների համայնքների ծրագրերի մշակման և կազմման գործընթացին, մասնակցում է Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նախագծերի կազմմանը, իրականացնում է սպասարկվող համայնքներում ծրագրերի մոնիտորինգի անցկացումը, իրականացնում է միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից Մարզում իրականացվող ծրագրերի մոնիտորինգի գործընթացը, իր իրավասության շրջանակներում կատարում է արդյունքների վերլուծության և կիսամյակային կամ տարեկան հաշվետվությունների ձևով ներկայացնում է Բաժնի վարիչին, իրականացնում է Մարզի առևտրի, հանրային սննդի սպասարկման բնագավառում տնտեսվարող սուբյեկտների գործունեության ընդլայնման, արդյունավետության բարձրացմանը նպաստող վերլուծական աշխատանքներ.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի „բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

Մրցույթը կանցկացվի „23,, սեպտեմբերի 2014թ. ժամը՝ 15⁰⁰-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում /ք. Գավառ Կենտրոնական Հրապարակ 7/ Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ/ների/, վկայական/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.

- մեկ լուսանկար 3.4 չափսի.

- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10⁰⁰-ից մինչև 13⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է << 13 >> օգոստոսի 2014թ.:

Մրցութային մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-76/: